

. . . Դարձեալ Ած ողորմի ասացէք Ստամպօլցի մ'տ. Յու վակիմին որ բազում աշխատանք կրեաց ի թուղթ կոկեհն. եւ դարձեալ աղաչեմ զձեզ. ով դասք քահանայից եւ սարկաւագաց. յորժամ կարգայք զսբ գիրքս ա բերան ամ ողորմի ասացէք. տխրեալ Մխիթարս, զի խիստ աշխատեցայ ի կարկատեհն. եւ ի յեղծած գրերն եւ յայլ պակաս լինեհն. . . Յայսմ ամին բազում նեղութիւն եւ պակասութիւն եղև ի սբ յերուսաղէմ, վասն ջրոյ եւ հացի յիմ ծովացեալ մեղացն. . . »:

ՄԽԻԹԱՐ ԱԲ. ՎԱՆԵՑԻ (Լիւն). — 1680 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ յիշատակ կուտայ Աւեսարան մը որ 1652ին ընդօրինակուած է. իսկ տեղն ու գրին անյայտ. ստացողը Վարդան վրդ.: Մխիթար կը գրէ հետեւեալ յիշատակարանը նոյն ձեռագիրին մէջ. «Յիշատակ է սբ աւետարանս սբ Յարութեան եւ լուսաբուխ սբ Գերեզմանին Քս.ի. տէր Մխիթար Վանեցի աբեղայս եզի յիշատակ ի դուռն սբ Յարութեան. . . եւ իւր ծնողացն Ներսէսին եւ Շահպատէին. . . ի թվին Ռժիթ (= 1680). . . եւ ի յառաջնորդութեան սբ Երուսաղիմայ տէր Թովալին, որ այսմ ամի ղապալով էառ ի ձեռացն Մարտիրոս վարդապետին, եւ Մարտիրոսն էառ ի ձեռացն տեառն Եղիազարու, եւ այսպէս հակառակ միմեանց բազում պարտք դիզեցին ի վերայ սբ Յակոբայ: Աստուած զվերջքն բարի կատարի, այժմ Թովալը բերդն ի զնտանն է վասն պարտուցն. . . վարդապետի իշխանութիւն, որ առաւ ՌժԴ (= 1655) թվին, ես տէր Մխիթարս որ տւրհնուա ՌժԱ (= 1652) թվին»: (Խապ. Յուց. տետր. Ը. էջ 567-68):

ՄԽԻԹԱՐ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ (Տաննիք գաւառին). — Կ'ապրէր է. դարուն, երկու ընկերներու հետ ուխտաւորութեամբ կ'այցելէ Տնօրինական Ս. Տեղիքը, եւ կը մնայ տարի մը. Հռոմ շէնցի հաւատարիմ մէկու մը միջոցաւ կ'ստանայ Ս. Ստեփանոսի եւ Ս. Գէորգի մասունքը. Երուսաղէմէն վերադարձին՝ կը հանդիպի Տաւրոս, Անդրէի վկայարանը, որուն Թովմաս սպասաւորէն Ս. Անդրէի մասունքն ալ ձեռք բերելով՝ կը տանի ու կը զետեղէ զանոնք Արձախի մէջ (Կղնկոյց. Բ. դիրք, էջ 418):

ՄԽԻԹԱՐ ԿՐՕՆԱԻՈՐ ՈՒՌՀԱՅԵՑԻ. — Ս. Յակոբի վանքին իբր յիշատակ կը նուիրէ մագաղաթեայ արծաթապատ աւեսարան մը (ՄՁ. Թ. 532):